ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավան համայնք
Երևանյան խճուղի 2 րդ փողոց N1
Հեռախոս (096) 11-00-44
էլ. փոստ merdzavan.armavir@mta.gov.am

23.11.2017թ.
թիվ 283

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ին կայացած արտահերթ / N12/ նիստի որոշումները:

Միաժամանակ հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու <<Մերձավան համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակների ու դրույքաչափերի սահմանման մասին>> N63-Ն, << Մերձավանի համայնքապետարանի կողմից, մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման մասին>> N64-Ն, <<Համայնքային սեփականություն սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին>> N65-Ն և <<Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին>> N66-Ն որոշումները սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր 22 /քսաներկու/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017 թվականի N60 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, **ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16 ի արտահերթ նիստի (թիվ12) օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|---|
| ԱՎԵՏԻՔ | ՏՈՆՈՅԱՆ | | | |
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 16-ի
N60 Ա որոշման

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՏԱՀԵՐԹ (ԹԻՎ12) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ*

60. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

61. ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

62. ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՈՒ <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ, ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

63. ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

64. ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

65. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

66. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

67. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

68. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017 թվականի N61-Ա

## *ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետի դրույթներով, **ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի վարձատրության չափ ամսական 196 000 ՀՀ դրամ՝ 2018 թվականի բյուջետային տարվա համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|---|
| ԱՎԵՏԻՔ | ՏՈՆՈՅԱՆ | | | |
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017թվականի N62-Ա

# *ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՈՒ <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 րդ հոդվածի առաջին մասի 28 րդ կետի դրույթներով, **ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի բյուջետային տարվա համար՝ համաձայն հավելվածի N1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքային ենթակայության <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի բյուջետային տարվա համար՝ համաձայն հավելված N2 ի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքային ենթակայության <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինություն բյուջետային հիմնարկի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի բյուջետային տարվա համար՝ համաձայն հավելված N3-ի:

4.1974 թվականից հետո ծնված բոլոր աշխատակիցներին տրամադրել լրավճար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0)

ԱՎԵՏԻՔ ՏՈՆՈՅԱՆ

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՎԻԹ Ա[illegible]ՍՈՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՊԱՅԼԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաշատ
համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 16 ի
N62-Ա որոշման N1 կետի

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄՐԳԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

1.Աշխատակիցների քանակը՝ 14

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

(հազ.ՀՀ դրամ)

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Ամսական աշխատավարձը |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 196,0 | 196,0 |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 150,0 | 150,0 |
| | Աշխատակազմ | | | |
| 3. | Աշխատակազմի քարտուղար | 1 | 157,0 | 157,0 |
| 4. | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 150,0 | 150,0 |
| 5. | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 2 | 138,0 | 276,0 |
| 6. | Աշխատակազմի 1 ին կարգի մասնագետ | 1 | 132,0 | 132,0 |
| 7. | Աշխատակազմի 2 րդ կարգի մասնագետ | 2 | 120,0 | 240,0 |
| | Տեխնիկական սպասարկման աշխատակազմ | | | |
| 8. | Գործավար-օպերատոր | 1 | 115,0 | 115,0 |
| 9. | Տնտեսվար | 1 | 115,0 | 115,0 |
| 10. | Օժանդակ բանվոր | 1 | 115,0 | 115,0 |
| 11. | Հավաքարար | 1 | 73,0 | 73,0 |
| 12. | Անասնաբույժ | 1 | 100, 0 | 100,0 |
| | Ընդամենը | 14 | | 1819,0 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 16-ի
N62-Ա որոշման N2 կետի

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

1.Աշխատակիցների քանակը 19
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

(հազ. ՀՀ դրամ)

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Ամսական աշխատավարձը |
|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 110,0 | 110,0 |
| 2. | Հաշվապահ | 1 | 92,6 | 92,6 |
| 3 | Դաստիարակ | 4,48 | 92,6 | 414,85 |
| 4. | Բուժքույր | 1 | 73,0 | 73,0 |
| 5. | Դաստիարակի օգնական | 4 | 73,0 | 292,0 |
| 6. | Դաշնակահար | 1 | 92,6 | 92,6 |
| 7. | Տնտեսվար | 1 | 74,0 | 74,0 |
| 8. | Խոհարար | 1 | 74,0 | 74,0 |
| 9. | Խոհարարի օգնական | 1 | 74,0 | 74,0 |
| 10. | Օժանդակ բանվոր | 0,5 | 73,0 | 36,5 |
| 11. | Պահակ | 2 | 74,0 | 148,0 |
| 12. | Դռնապան | 1 | 80,0 | 80,0 |
| | Ընդամենը | 18,98 | - | 1561,55 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 16-ի
N62-Ա որոշման N3 կետի

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

1.Աշխատակիցների քանակը 8
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

(հազ ՀՀ դրամ)

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Ամսական աշխատավարձը |
|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 110,0 | 110,0 |
| 2. | Հաշվապահ | 0,5 | 92,6 | 46,3 |
| 3 | Գեղմասվար | 1 | 90,0 | 90,0 |
| 4 | Սպորտ հրահանգիչ | 1 | 73,0 | 73,0 |
| 5. | Գրադարանի վարիչ | 1 | 90,0 | 90,0 |
| 6 | Պահակ | 2 | 73,0 | 146,0 |
| 7. | Հավաքարար | 1 | 73,0 | 73,0 |
| | Ընդամենը | 7,5 | - | 628,3 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017 թվականի N63-Ն

# *ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7 րդ, 8 րդ, 9-րդ, 10 րդ և 11-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18 րդ կետի,<<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը 2018 թվականի բյուջետային տարվա համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | **Կողմ (7)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|---|---|
| ԱՎԵՏԻՔ | ՏՈՆՈՅԱՆ | | | |
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 16 ի
N63 Ն որոշման

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7 500 ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000ՀՀ դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000ՀՀ դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 25 000ՀՀ դրամ,

բդ) 3001 ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50 000ՀՀ դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500ՀՀ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500ՀՀ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500ՀՀ դրամ

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. մինչև 2500ՀՀ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000ՀՀ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000ՀՀ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝350 ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 000ՀՀ դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 60 000ՀՀ դրամ.

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000ՀՀ դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500ՀՀ դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500ՀՀ դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 375ՀՀ դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500ՀՀ դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000ՀՀ դրամ:

Համայնքի տարածքում տեղական վճարները սահմանվում է.

9. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 7 500ՀՀ դրամ:

10.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5 000ՀՀ դրամ:

11. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5 000ՀՀ դրամ:

12. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար.՝

ըստ հասցեի հաշվառում ունեցող և առանց հաշվառման /փաստացի/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար սահմանվում է ամսական վճար՝ 100ՀՀ դրամ.

13. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ ամսական 5000 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի << ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> N63-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի << Մերձավան համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակների ու դրույքաչափերի սահմանման մասին >> N63-Ն որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով և դրա անհրաժեշտությունը կայանում է, որ այն ուղղված է համայնքի կողմից տեղական տուրքերի և վճարների գանձման հավասար մատչելիությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017 թվականի N64-Ն

## *ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը 2018 թվականի բյուջետային տարվա համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|---|
| ԱՎԵՏԻՔ | ՏՈՆՈՅԱՆ | | | |
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 16-ի
N64 Ն որոշման

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքային ենթակայության <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ սաների 2018 թվականի ծնողական վարձավճարը սահմանել ամսական 5 000 ՀՀ դրամ.

1) ծնողական վարձավճարից ազատել զոհված ազատամարտիկների և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին.

2) ծնողական վարձավճարից կիսով չափով (50%) ազատել.

ա. միակողմանի ծնողազուրկ երեխաներին

բ. նպաստառու ընտանիքների երեխաներին.

գ. չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների երեխաներին:

2. Ուսման վարձավճարից ազատել.

1) զոհված ազատամարտիկների, երկկողմանի ծնողազուրկ երեխաները.

2) ուսման վարձավճարից կիսով չափով (50%) ազատել.

ա. միաժամանակ երկու խմբերում սովորող սաներին.

բ. միևնույն ընտանիքից երկու և ավելի խմբերում սովորող սաներին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչներին, 2018 թվականի համար, հասցեի որոշում տրամադրելու համար՝ 500 ՀՀ դրամ:

4. Հայաստանի Հանրաապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչներին, 2018 թվականի համար, բնութագիր տրամադրելու համար՝ 200 ՀՀ դրամ:

5. Հայաստանի Հանրաապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչներին, 2018 թվականի համար, <<Ինքնակամ կառույցների գույքային իրավունքները վերականգնելու մասին>> որոշում տրամադրելու համար՝ 1 000 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

*ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի << ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ, ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> N64-Ն ՈՐՈՇՄԱՆ*

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի << Մերձավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման մասին>> N64-Ն որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի պահանջներով և դրա անհրաժեշտությունը կայանում է, որ այն ուղղված է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հավասար մատչելիությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017 թվականի N65-Ն

### *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևանյան խճուղու թիվ 59/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության 0,008 հեկտար խառը կառուցապատման հողամասը (լոտ1, կադաստրային ծածկագիր 04-065- 0033-0006):

Աճուրդային կարգով օտարման համար մեկնարկային գին սահմանել 154 000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 7 700 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 7 700 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

2. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևանյան խճուղու 1-ին փողոցի թիվ 1/6 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության 0,0542 հեկտար այլ հողատեսքի հողամասը (լոտ2, կադաստրային ծածկագիր 04-065- 0612-0022):

Աճուրդային կարգով օտարման համար մեկնարկային գին սահմանել 1 040 000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 52 000 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 52 000 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

3. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, Մասիսի փողոցի թիվ 1/2 հասցեում

գտնվող, բնակավայրերի նշանակության 0,0061 հեկտար խառը կառուցապատման հողամասը (լոտ3, կադաստրային ծածկագիր 04-065- 0062-0089):

Աճուրդային կարգով օտարման համար մեկնարկային գին սահմանել 118 000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 5 900 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 5 900 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

4.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ (7)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ՏՈՆՈՅԱՆ

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**ՈՐՈՇՈՒՄ**

16 նոյեմբերի 2017 թվականի N66-Ն

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, 81-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 99 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի նշանակության Երկրագերձների փողոցի N17/2 հասցեում գտնվող 0,0102 հեկտար ընդհանուր օգտագործման հողամասը (լոտ1, կադաստրային ծածկագիր 04-065 - 1030 0002):

Հողամասի տարեկան վճարի մեկնարկային գին սահմանել 2000 ՀՀդրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 100 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 25 տարի ժամկետով, վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողերի 3,0 հեկտար հողամասը /լոտ 2, կադաստրային ծածկագիր 04-065-0601-0015/:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 2 000 ՀՀ դրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 100 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

3.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, մրցույթն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | | Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|---|
| ԱՎԵՏԻՔ | ՏՈՆՈՅԱՆ | | | |
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԿՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017 թվականի N67-Ա

## *ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով 2017 թվականի նոյեմբերի 14- ին համայնքում տեղի ունեցած հանրային լսումների արձանագրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին** ***որոշում***

1. Տալ նախնական համաձայնություն, որպեսզի համայնքի վարչական սահմաններում գտնվող , <<Սահակյանշին>> ՓԲ ընկերության սեփականությունը հանդիսացող 4,0 հեկտար /կադաստրային ծածկագիր 04-065-0210-0005/ հողամասում ընկերությունը սահմանված կարգով իրականացնի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|---|
| ԱՎԵՏԻՔ | ՏՈՆՈՅԱՆ | | | |
| ԱՐՏԱԿ | ԵՍԱՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | | | |
| ԴԱՎԻԹ | ԱԽՏՈՅԱՆ | | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՇԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՊԱՅՔԱՐ | ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՎՈԼՈԴՅԱ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2017 թվականի N68-Ա

## *ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի, 18-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 22-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 1-ի N5-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2017 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Սոցիալական ապահովության վճարներ>> գումարից 140 000 ՀՀ դրամ, որպես դրամական օգնություն, տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին: Ընտանիքների ցանկը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

**Կողմ (7)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ՏՈՆՈՅԱՆ
ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017թվականի նոյեմբերի 16-ի
N68-Ա որոշման

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

| N/ N | Ազգանուն | Անուն | Հայրանուն | Գումարի չափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1. | Հովսեփյան | Հեղինե | Սերգեյի | 50 000 |
| 2. | Հակոբյան | Քրիստինե | Էլիբեկի | 40 000 |
| 3. | Մելքոնյան | Սալվի | Ստեփանի | 50 000 |
| | Ընդամենը | | | 140 000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ